

ՍԱՆ ՌԱՖԱՅԵԼԻ (ՖՐԱՆՍԻԱ) ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՏՈՒՈՒ ՕԾՈՒՄԸ

Սեպտեմբերի 17-ին, կիրակի օրը, կատարվում է Սան Ռաֆայելի հայկական տան ս. Հովհաննես մատուռի հանդիսավոր օծումը՝ ձեռամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

Այս հանդիսությանը մասնակցել են նաև Մարսելի և հարավային Ֆրանսիայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, Ժնևի հայոց հոգևոր հովիվ տ. Վազգեն ծ. վրդ. Թադոյանը և տեղի հայկական տան հոգևոր հովիվ տ. Հակոբ քահանան:

Սուրբ Հովհաննես եկեղեցին

Մատուռի ամբողջական ծախսերը հոգացել է Բուենոս Այրեսում բնակվող տիկին Մատուռը կառուցվել է հայ ճարտարապետ հանգուցյալ ամուսնու՝ Հովհաննես Տիարպեքիրյանի:

Մարթա Տիարպեքիրյանը՝ ի հիշատակ իր

պետական ոճով, թեև փոքր, բայց շատ գեղեցիկ ու կոկիկ մի մատուռ է, որը գրավում է բոլոր այցելուների ուշադրությունը:

Սեպտեմբերի 16-ին, շաբաթ օրը, երեկոյան, հայրապետական պատվիրակը, շրջապատված հոգևորականներով և ժողովրդի բազմությամբ, նախագահում է մատուռի դռնբացեքի արարողությանը: Ապա կատարվում է կիրակամտի ժամերգությունը:

Կիրակի օրը, առավոտյան, հայրապետական պատվիրակը մատուցում է հանդիսավոր ս. պատարագ և կատարում օծումը Սեղանի, պատկերների և չորս պատերին ագուցված խաչերի:

Օծման արարողության ավարտին պատարագիչ սրբազանը հավուր պատշաճի խոսքերով իր գոհունակությունն է հայտնում Տիարպեքիրյան ծանոթ բարերար գերդաստանին և մասնավորաբար՝ տկն. Մարթային, որը գեղեցիկ գաղափարն է ունեցել իր ամուսնու հիշատակը այս ձևով հավերժացնելու: Սան Ռաֆայելի այս գողտրիկ և նազելի մատուռի կառուցումով Ֆրանսիայի հյուրընկալ հողի վրա արդեն կառուցված 30 հայ եկեղեցիների վրա ավելանում է մի նոր եկեղեցի, որպես խորհրդանշան մեր ժողովրդի քրիստոնեական հավատքի և կամքի և ի մխիթարություն այս հաստատության մեջ ապաստան գտնող հայ ծերերի:

Պատարագից հետո տեղի հայ աղքատախնամ ընկերության վարչությունը, ընկերություն, որը հիմնված է 1890 թվականին Փարիզում, և որի խնամքին են հանձնված Ֆրանսիայի չորս ծերանոցները, երեքը Փարիզում, իսկ մեկը՝ հատկացված մտավորականներին, Սան Ռաֆայելում, Միջերկրականի ափին, կանաչազարդ ու գեղեցիկ այս քաղաքում, ճաշկերույթով պատվում է հոգևորականներին և հայ ու օտար հյուրերին: